ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ -17/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստ
(Գրասենյակային նյութեր)

ք. Երևան 08 դեկտեմբերի 2017թ. Ժամը 15:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝	Հ. Արչունց
Գնահատող անդամներ (ԳԱ)՝	Թ. Զաքարյան, Շ. Հարությունյան
Բացող անդամներ (ԲԱ)՝	Ա. Իսկանդարյան, Հ. Մելիքյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ա. Պետրոսյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված եզրակացության գնահատում:
3. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի գնահատում:
4. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին:

Քվեարկությամբ ընդունվել է ՝ կողմ 5, դեմ 0:

2.ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված եզրակացության գնահատում

2.1 ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված եզրակացության համաձայն առաջին տեղ զբաղեցրած մասնակիցները՝ «ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆ» ՍՊԸ-ն և «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ չունեն ժամկետանց հարկային պարտավորություններ:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

3. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի գնահատում:

3.1 Ըստ ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության պահանջների, սահմանված կարգով և ժամկետում «ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆ» ՍՊԸ-ն և «Մեծ Ծիածան» ՍՊԸ մասնակիցները գնահատող հանձնաժողովին են ներկայացրել իրենց կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը՝ համաձայն Հրավերի տեքստի հավելված N 6 և 6.1-ի

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

Հիմք ընդունելով 2.1 և 3.1 կետերը գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. «ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-17/19» ծածկագրով գնման ընթացակարգի N 1-24 (ներառյալ) և 26-36 (ներառյալ) չափաբաժինների մասով I տեղ զբաղեցրած մասնակից «ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆ» ՍՊԸ-ին ճանաչել *ընդրված* մասնակից:
2. «ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-17/19» ծածկագրով գնման ընթացակարգի N 25 չափաբաժնի մասով I տեղ զբաղեցրած մասնակից «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ին ճանաչել *ընդրված* մասնակից:
3. Հաստատել և գնումների էլեկտրոնային տեղեկագրում հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և ընտրված մասնակիցների իրական շահառուների մասին տվյալները:
4. Ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում *պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը* հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը՝ 09.12.2017թ.-13.12.2017թ. ներառյալ:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

4.Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

4.1Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 29-րդ կետը՝ պայմանագիրը կնքելուն հաջորդող օրը Գնահատող հանձնաժողովը համարվում է լուծարված:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝	_____	Հ. Արչունց
Գնահատող անդամներ (ԳԱ)՝	_____	Թ. Զաքարյան
	_____	Շ. Հարությունյան
Բացող անդամներ (ԲԱ)՝	_____	Ա. Իսկանդարյան
	_____	Հ. Մելիքյան
Հանձնաժողովի քարտուղար՝	_____	Ա. Պետրոսյան